ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

25 հուլիսի 2024 թվականի թիվ 82-Ա

ք. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 5-ի «Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ժամանակավոր մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը սահմանելու մասին» թիվ 120-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 22-ի թիվ 80-Լ արձանագրային որոշմամբ մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկված թվով 5 թեկնածուներից ստացված համաձայնությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց՝***

1. Հաստատել Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման ժամանակավոր մրցութային հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1. Սառա Նալբանդյան,
2. Սերոբ Խաչատրյան,
3. Արայիկ Խզմալյան,
4. Արքմենիկ Նիկողոսյան,
5. Գրիգոր Խաչատրյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

25 հուլիսի 2024թ.
ք. Երևան